ընդարձակ նիւթ. ընելիք շատ բան կայ՝ որոնց մենք հերոսացիներս անկարող ենք. Հայերը պիտի աշխատին. և սակայն Հայոց մէջ եւս արդէպի ցանցառ է լեզուաբանութեամբ զբաղողներու թիւը»։

Իրաւունք ունի։

ՀՐԱՉԵԱՑ Ց. ԱՃԱՌԵԱՆ

Ստրասբուրգ, 22 Մայիս 1898

ՎԱՆԱՑ ԾՈՎԱԿԻ ԿՂԶԻՆԵՐԸ

ԱՂԹԱՄԱՐ

(Շար. յէջ 233)

Տէր Մարտիրոսէ վերջ կու գան տասն և չորս հայրապետք, որոց վրայ յիշատակելու պատմական տեղեկութիւն մը չունինք։ Էջմիածնի Տ. Ղազար Ջահկեցւոյ կաթողիկոսութեան ժամանակ՝ Աղթամարայ հայրապետական գահը օրէ ցօր կ'ինկնայ յոյժ ողբալի դրութեան մէջ և կ'անշքանայ։ Դորա պատճառն էր, նոյն ժամանակի անարժան հայրապետն, Յակոբ Ամթեցին, որ իւր անյարմար կացութեամբը կաթողիկոսարանը և վանքը մեծամեծ պարտուց տակ ընկնելէ վերջ, յանդգնեցաւ Սուրբ Խաչի կրօնաւորներն ցրուել և անոնց տեղ վանքի մէջ ընտկեցընել կանանցի աշխարհականներ՝ կաթողիկոսի այսօրինակ վարմունքն անտանելի զարհուրեցաւ Աղթամարցոց, որք զգուելով իրմէ, հուսկ ուրեմն միաբան հաւանութեամբ կ'ընտրեն զինքն յաթոռոյն և կ'աքսորեն, և կ'ընտրեն իրենց նոր կաթողիկոս Նիկողայոս անուն վարդապետ մը, որ գովեստիւ յիշուի ի շարս կաթողիկոսաց, այր իմաստուն, հեռատես հին և նոր կտակարանաց և արտաքնոց։ Նորընտիր հայրապետն Սուրբ Խաչի ցրուեալ միաբանները ի մի հաւաքելէ վերջ, կը սկսի իւր նախորդաց ոմանց նման իւր վիճակները ընդարձակելու փորձ ընել։ Յետ ժողով գումարելոյ և խորհրդակցելու, Աղեքսանդր աբեղայ ոմն կ'ուղարկուի ի Կոստանդնուպօլիս, հայրապետին այդ փափաքը իրագործելու համար։ Նոյն աբեղային կը յաջողի այլոց միջամտութեամբ ծածուկ հրամանագիր մը (գօյրուք ֆէրմանը) հանել տէրութեան գունէն, յորում հրաման կը տրուի թէ, Մուշ, Վան, Բաղէշ նահանգները և անոնց շրջակայքը կը վերաբերին Աղթամարայ։ Այս հրամանագիրը առած կու գայ Վան, և Նիկողայոս հայրապետն ալ մեծ ցնծութեամբ գալով ի Վան, կը տանի կը ներկայացընէ զայն տեղւոյն իշխանին, որ տեսնելով իւր տերութեան հրամանագիրն, յարգութեամբ կ'ընդունի զհայրապետն և կը պատուէ զինքն հանդերձիւք (խիլաթ)։ Այն օրէն կը կարգուի Աղեքսանդր աբեղայն նուիրակ Աղթամարայ այդ նոր ստացուած վիճակաց. կը բռնեն նոյն ժամանակի Էջմիածնի նուիրակ Յովհաննէս վարդապետը, և ձեռքէն առնելով հաւաքած արդիւնքները՝ կ'արձակեն։

Հազիւ թէ այս ամենայն եղելութիւնք կ'իմանայ Էջմիածնի Ղազար կաթողիկոսն, իսկոյն կը գրէ ի Կ. Պոլիս, առ պատրիարքն Հայոց Յակոբ վարդապետ, որ 1746 թուին նոր և հաստատուն վճռով հրամանագիր մը կ'առնու Օսմանեան պետութենէն։ Այդ հրամանագրի զօրութեամբ վերստին Էջմիածնի կ'անցնին վերոյիշեալ վիճակներն. Տ. Նիկողայոսն ալ կը բանադրուի ազգին ընդհանուր կաթողիկոսէն։ Այս կերպով Աղթամարը թէ նիւթապէս և թէ բարոյապէս շատ կը տկարանայ, այնպէս որ հայրապետէն

1. Այս տեղեկութիւնք ինչպէս նաեւ յետագայ մի քանի կաթողիկոսաց վրայ պատմուած դէպքերը, մեծաւ մասամբ կը քաղեմք Սիմէոն կաթողիկոսի Ջամբռ Գրքէն, որոյ անկողմնաբեր, պարզ և ստուգապատում լինելուն կամ չլինելուն երաշխաւոր չենք կարող լինել, քանի որ առ ժամս, այս ժամանակամիջոցիս դէպքց վրայ խօսող ուրիշ հրատարակուած պատմագրութիւն մը չունինք։

digitised by A.R.A.R.@

սկսեալ բոլոր վանականք և աշխարհականք, բազմակիք ստորագրութեամբ աղերսանաց և հնազանդութեան թուղթ կը գրեն առ Ղազար կաթողիկոսն։ Թղթոյն հետ կը գրկեն նաեւ զՏ. Նիկողայոս հանդերձ երեսփոխանօք, ինդրելով ընդհանուր հայրապետէն, որ ի բանադրանաց արձակէ իրենց հայրապետը և Աղթամարայ աթոռոյն աղքատութեան և պարտուց օգնութիւններ ընէ։ Այս խնդիրքներու հետ միանգամայն կը խոստանան իրենց կաթողիկոսներով և վիճակօք հնազանդիլ Էջմիածնի ընդհանուր կաթողիկոսաց։ Ղազար հայրապետն մեծ սիրով և հրճուանօք կ'ընդունի Աղթամարցոց խնդիրքն, և զՏ. Նիկողայոս արձակելով ի բանադրանաց, վերստին կը հաստատէ իւր աթոռոյն վրայ։ Յետոյ հաւանութեամբ Տ. Նիկողայոսի և նորին վիճակայնոց, շատ եպիսկոպոսաց ներկայութեամբ կանոնական կոնդակ[1] մը կը գրէ հետեւեալ իմաստով. «Աղթամարցիք այսուհետեւ ընդունին իրենց կաթողիկոս զՏ. Նիկողայոս և մինչեւ մահը ուրիշ մէկը չդնեն, ինչպէս առաջ կ'ընէին։ Մահէն վերջն ալ ուրիշ մը ինքնագլուխ չ'նստեցընեն, այլ կաթողիկոսութեան արժանաւոր անձը, իւր բոլոր վիճակայնոց բազմակիք թղթով դրկեն յԱթոռս (յԷջմիածին) որ առ օծուի»։ Այսոր նման ուրիշ քանի մը կանոններ ալ գրելով կոնդակը կը կնքէ Ղազար կաթողիկոսն, յետոյ կը կնքէ նաեւ Նիկողայոս կաթողիկոսն և հոն ներկայ եղող եպիսկոպոսներն։ Ի վերջոյ նոյն կոնդակի մէջ կը վճռեն, թէ. «Այսուհետեւ ով որ հետեցի յայոց կանոնաց՝ նզովեալ լիցի յամենասուրբ Երրորդութենէն, յամենայն սրբոց Նորին և ի մէնջ»։ Նիկողայոս հայրապետն այս կոնդակն առնելով մեծ շքով և փառաւորութեամբ կը դառնայ իւր աթոռը, և մինչեւ մահը կը շարունակէ իրեն յանձնուած այդ բարձր և գժուարին պաշտօնը։

Առ հարկ կը համարիմ ծանուցանել ընթերցողաց, որ Աղթամարայ հին կոնդակի մեր ունեցած Բ. օրինակէն վերջ գրուած կաթողիկոսաց շարքէն կը տեղեկանամ[1], թէ սոյն այս Տ. Նիկողայոս հայրապետն ետեւէ եղած և մեծ աշխատութեամբ յօրինած է մեր հրատարակած կաթողիկոսաց շարքը։ Նա կը յայտնէ, թէ կան նաեւ ուրիշ կաթողիկոսներ, զորս չէ կարողացած որոշել. «... զի բազում անուանք նման միմեանց էին, ի պատմագրաց այսչափս հազիւ կարացաք գտանել, զի կարն մեր այս էր»։

Տ. Նիկողայոսի վախճանէն վերջ, Աղթամարցիք հակառակ իրենց խոստման և վերոյիշեալ կոնդակի կանոնաց, ինքնագլուխ կը նստեցընեն իրենց կաթողիկոս զՏ. Գրիգոր։ Այսոր հայրապետութեան ժամանակ, որ կը համարուի 1751էն 1764, Էջմիածնի հայրապետական գահը նստած են յաջորդաբար Տ. Մինաս, Տ. Աղեքսանդր Բ և Տ. Սահակ Ե կաթողիկոսունք, որոնք ժամանակին խառնակմանց պատճառաւ անձեռնհաս եղած են և չեն կարողացած գործոն մ'ընել Աղթամարցոց բռնած ընթացքին։ Բայց կարելի է նաեւ համարել թէ Աղթամարցիք հակառակ իրենց փափաքանաց, ժամանակին յարուցած դժուարութեանց պատճառաւ, զանց ըրած են իրենց նորընտիր հայրապետն՝ հանդերձ բազմակիք թղթով, յղել Էջմիածին, անդ օծուելու համար։ Վախճանելով Տ. Գրիգոր 1764ին անմիջապէս իրեն կը յաջորդէ Թումս կամ Թումման անուամբ վարդապետ մը, որ կաթողիկոսաց շարքի մէջ կոչուած է «Աղթամարցի, ի ցեղէ Գաձիկ Թագաւորին»։ Սոյն այս Տ. Թումման

---

1. Այս կոնդակի մէկ օրինակն պահուած յԷջմիածին։

1. Բուն գրչի խօսքերն հետեւեալք են. «Այս հաւաքումն կաթողիկոսաց եղեւ ձեռամբ երջանիկ Նիկողայոսի հայրապետին ի թուականութեան Հայոց ՌՃԶԻՆ (= 1741*), յերբորդ ամի հայրապետութեան Նորին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»։

* Գրչի յիշատակած այս բառականն այնպես կը հասկցուի թէ Տ. Նիկողայոս բազմած է Աղթամարայ հայրապետական գահը 1738ին, մինչդեռ Սիմեոն կաթողիկոս կը դնէ Տ. Նիկողայոսի հայրապետանալն ՌՃԶԲ (= 1743) թուին, ուստի մին կամ միւսը սխալած լինելու են։

digitised by A.R.A.R.@

հայրապետը, ստոյգ չգիտեմք միաբանութեան սիրով վառուած, թէ դրամական օգնութիւն ձեռք բերելու դիտմամբ, Աղթամարէն կ'երթայ Էջմիածին և կիրակի օր մը բոլոր միաբանութեան և ժողովրդեան դիմաց, սուրբ Պատարագի ժամանակ, ինկնալով Տ. Յակոբ Շամախեցի կաթողիկոսի ոտքը, և ըստ անառակին որդւոյն զոչեմ ըսելով, կը խնդրէ արձակումն և հին հայրապետաց կանոնաց վերանորոգումն, և կը խոստանայ հնազանդութիւն։ Յակոբ կաթողիկոսն սիրով զինքը կ'ընդունի և վրան Անառակին աւետարանը կարդալով կ'արձակէ ի կապանաց, և կը հաստատէ վերստին կաթողիկոս Աղթամարայ վիճակին։ Ղազար կաթողիկոսի նման և ա-նոր գրածին իմաստով մանաւոր կոնդակ մ'ալ կը գրէ հաւանութեամբ Տ. Թովմայի, ներկայութեամբ և ակայութեամբ Լիմ և կտուց անապատաց միաբան կարապետ և Յակոբ վարդապետաց և ուրիշ շատ եպիս-կոպոսաց։ Այս կոնդակի մի օրինակն այժմ պահուի ի դիւան Էջմիածնի, իսկ միւս օրի-նակն զոր ընդ իւր բերաւ յԱղթամար Տ. Թովմաս հայրապետը, անշուշտ պահուի ի հայրապետանիստ վանս սուրբ Խաչի և կամ վասպուրականի մի ուրիշ վանքում։ Տ. Սի-մէոն կաթողիկոսն Էջմիածնի (1763–1780) որ յաջորդած է Տ. Յակոբայ, ասոյն Թովմաս հայրապետի համար կը գրէ. «... որքան նստեալ է յաթոռ իւր, թէ ի յաւուրս Յա-կոբայ կաթողիկոսին և թէ ի մեր ժամանակս, զսուրբ Մեռոնն ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ առեալ բաշխէ վիճակին իւրոյ։ Թէպէտ ինքն զնիւթն խնդրէր՝ զի ինքն օրհնիցէ, սակայն մենք զօրհնեալ սուրբ Մեռոնն տայաք[1]»։

Յետ Տ. Թովմայի հայրապետական գահը կը նստի, Տ. Կարապետ Ղանքէմենց, զոր ըստ յիշելոյ կաթողիկոսաց շարքի Բ օրի-նակին, սպաննեցին սուրբ Սահակայ մնա-որ սուրբ Սահակն է այդ, և թէ ինչ պատ-ճառաւ սպանուեր է, մեզ անծանօթ կը մնայ։ Ակէ վերջ կը յիշուին պարզ անուամբ Տ. Մարկոս[2], Տ. Յովհաննէս Սպարկերացի և Տ. Միքայէլ Վանեցի, որ կոչուած է յոյժ երաժիշտ։ Երաժիշտ հայրապետէս վերջ կու գայ Տ. Կարապետ Շատախեցի, յոյժ ողորմած կոչուածը, որ կ'ինկնայ գարուս սկիզ-բը։ Ասոր ժամանակ տեղի ունեցաւ Ադարա-տայ Բազրեւանդ գաւառի Ս. Յովհաննու (իւլ Քիլիսէ) վանուց մէջ, ազգային եկեղեցական պատմութեան վերաբերեալ մեծ գէպք մը։ Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսի մահէն վերջ, երբ նորա յաջորդն Յովսէփ արքեպիսկոպոս Աղուութեան, գեռ Էջմիածնի կաթողիկոսա-կան գահն չնստած վախճանեցաւ, Դաւիթ Ղորդանեան Էնէգէթացին, ոչ ընդհանուր ազգի հաւանութեամբ, այլ ի ձեռն կուսակ-ցաց ոմանց, Երեւանայ խանին և այլ պե-տական անձանց բռնութեամբ 1801 թուին ապրիլի 28ին օծուեցաւ կաթողիկոս Էջմ-միածին[1]։ Այս պատճառաւ 1802ին մայիսի մէջ, վերոյիշեալ վանքում գումարուեցաւ ազգային եկեղեցական ժողով մը ուր ներ-կայ էին գրեթէ 15 եպիսկոպոսունք, 28 վարդապետք և բազմաթիւ քահանայք, որոց նախագահ նստած էր՝ ասոյն այս Տ. Կարա-պետ հայրապետն Աղթամարայ։ Այս ժո-ղովքով[2] կը բանադրուին ապօրինի Դաւիթը և իր կուսակիցները, և մեծ հանդիսով կ'օ-ծուի Տ. Դանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց։ Տ. Կարապետն չգիտեմք ո՞ր թուին կը կնքէ իւր կեանքն. իրեն կը յաջորդէ Տ. Խաչա-տուր Վանեցին, որոյ վրայ թէպէտ չունինք

1. Ջամբռ Գիրք, գլ. ԺԲ, էջ 97։

2. Սա յիշուած կաթողիկոսաց շարքի Բ օրի-նակի մէջ մնայն, որ մի քանի տարբերութիւն-ներ ունի մեր հրատարակածէն։

1. Մեր նիւթն չներելով առա երկարել մեր խօսքերն գարուս սկզբի մեր աշխարհի ընդհա-նուր հայրապետաց մանրամասն պատմութեան վրայ, կը յանձնեմք փափաքողաց կարդալ Պ. Աղեքսանդր Երիցեանցի Ամենայն Հայոց կա-թողիկոսութիւնը և Կովկասի Հայք վերնագրով ընտիր և կարեւոր գրուածքի Ա. Մասը, էջ 1–46։ Թիֆլիզ, 1894 տպ. Մ. Շարաձէի։

2. Ժողովքս հրատարակած է ժողովական պրակ մը որ կոչուի Հայեցի ժամնօրդութեան, ո-րոյ վերջը տպուած է նաեւ ժողովքի ներկայ գտնուողաց բազմաց անուանք։ Տպ. ի Կ. Պոլ-սի, 1802ին։

digitised by A.R.A.R.@

տեղեկութիւն ինչ, սակայն իրեն տրուած եր-կու ածականքն առաքինի և սուրբ, մեզ կ'ե-բաշխաւորեն, որ իւր պաշտօնը վարած պի-տի լինի արժանաւոր հովուի մը պէս։ Ցե-տոյ կը կաթողիկոսանայ Տ. Յարութիւն Ար-ծունեցին, որուն մականունը կապառոյ ձագ ասէին։ Սա ալ իւր պաշտօնին զոհ կը լինի, 1823ին աւագ ուրբաթ օրը նահատակուելով Թիֆլիսայ Սուրբ Խաչի մէջ։ Պատճառն ալ այս էր. Ապարանից Վանքի վանահայրը ապօ-րինի աշխարհիկ կեանք վարելուն պատճա-ռաւ՝ հայրապետս կը յանկիմանէ զինքն և կը խրատէ, իւր վիճակի վայել սուրբ կեանք անցընել. բայց նա փոխանակ զգաստանալոյ, կը մատնէ զՏ. Յարութիւն ի ձեռս անօրի-նաց, որք կը սպանանեն, և լոյս կը ճառա-գայթէ նահատակի մարմնոյն վրայ։

Հայրապետական գահը կը բարձրանայ Տ. Յոհաննէս Շատախեցին, մեզ ծանօթ չէ թէ քանի՞ տարի և ի՞նչ կերպով վարած է իւր պաշտօնն, բայց այս յայտնի է որ 1843ին նա կնքեց իւր երկրաւորը։ Այդ թուականէն սկսեալ Աղթամարայ կաթողիկոսաց ընտրու-թիւնք՝ հանդիպեցան մեծամեծ դժուարու-թեանց։ Մենք որչափ հնար է պիտի ջա-նամք համառօտիւ անցնիլ այդ կէտերու նկատ-մամբ, որոց վրայ արդէն Գեր. Մ. Իզմիրլեան ըստ բաւականի մանրամասն գրած է, յա-ռաջ բերելով այլ և այլ խնդիրներ, որոշումներ և թղթակցութիւններ, Կ. Պոլսոյ Հոդեւոր և գերագոյն ժողովոց արձանագրութիւններէն. փափաքողը կրնան հայեացք մը տալ այդ գրուածքի[1] վրայ։

Երբ Տ. Յովհաննէս հայրապետի մահուան լուրը կը հասնի ի Կ. Պոլիս, քաղաքի ազ-գային Պատրիարք Տ. Աստուածատուր արք-եպիսկոպոսը ազգի մեծամեծաց հետ ամե-նայն կերպով կը ջանայ որ այլ եւս Աղթա-մարայ կաթողիկոս չի դրուի, և նոյն ժամա-նակի վասպուրականի կողմանց բնաբար իշխող Խան—Մահմուտին ալ մանաւոր մարդ կը դրէէ, որ նոր կաթողիկոսի ընտրութեան չօգնէ։ Սակայն Պատրիարքի և այլոց բոլոր ջանքերու հակառակ, Աղթամարայ վիճա-կայինք միաբան կ'ընտրեն իրենց կաթողի-կոս զՏ. Խաչատուր եպիսկոպոսը, և Խան—Մահմուտն այլ որ ի վերին երեսս խօսք տուած էր չօգնելու այդ ընտրութեան, կը հաւանի և արգելք չի լինիր։ Այնուհետեւ Կ. Պոլսի Պատրիարքն որոշմամբ խորհրդա-կանաց, արքունի բարձրագոյն հրովարտա-կի մը զօրութեամբ զՏ. Խաչատուր աքսո-րել կու տայ ի Նիկոպոլիս (Շապին Գարա—Հիսար), բայց քիչ տարիէն կայսերական ընդհանուր շնորհման մ'առթիւ կը դառնայ յԱղթամար, առանց կարենալու ի գործ դնել իւր պաշտօնը։ Այդ պատճառաւ 1848 թուին պակսելով սուրբ Մեռոն Աղթամարայ վի-ճակին, վանայ առաջնորդն և ժողովականք կը խնդրեն Հոգեւոր ժողովէն՝ որ պէտք է-ղածը տնօրինէ։ Ասոր վրայ նոյն տարւոյ նոյեմբեր 10ին կ'որոշուի, որ գիր մը գրուի Էջմիածին առ ընդհանուր հայրապետն, որ պէտք եղած պահուն, երբ Վանայ առաջնորդն խնդրէ սուրբ Մեռոնը Աղթամարայ վիճա-կաց համար, այդ շնորհը չի խնայէ։ Խաչա-տուր կաթողիկոսը ոչ միայն սուրբ Մեռոն օրհնելէ դադրած է, այլ նաեւ պարտաւո-րուած է քահանայ ձեռնադրելու համար հրաման առնել Կ. Պոլսոյ Պատրիարքէն. ինչ-պէս 1850 տարւոյ նոյեմբեր 16ին խնդրած է հրամանագիր ձեռնադրութեան վասն երից անձանց, որոյ ոչ որոշում մը ըրած և ոչ ալ պատասխանած է Հոգեւոր ժողովը։ Հայ-րապետս իւր օրերն զրեթէ միշտ տառապա-նօք անցնելով, հուսկ ուրեմն 1851 թուի յունիս 12ին կը վախճանի, և Վանայ ա-ռաջնորդ Տ. Գաբրիէլ եպիսկոպոսը եկեղե-ցականաց և իշխանաց խորհրդակցութեամբ, Աղթամարայ կաթողիկոսութեան առ ժամա-նակեայ տեղակալ կը դնէ վանքի միաբան-ներէն նշանաւոր Տ. Խաչատուր վարդապե-տը։ Յուլիս 16ին ալ Աղթամարցիք եպիս-կոպոսներով, վարդապետներով քահանանե-րով և ժողովրդովք թախանձանաց թուղթ կը գրեն, բազմակնիք սասրագրութեամբ, առ

1. Որոյ Խորագիրն է. Հայրապետաբիւն Հա-յաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ և Աղթամար ոռ Սիս. յէջսն 510–424 և 1006–1068։ Տպ. 1882 Կ. Պոլիս։

digitised by A.R.A.R.@

Պատրիարքն և Հոգևոր ժողովն, որ իրենց կաթողիկոսությունը չվերցուի, այլ ըստ հին աւուրց սովորութեան Հոգևոր և Գերագոյն ժողովոց գիտութեամբ՝ ընտրուի արժանաւոր հայրապետ մը։ Կը յայտնեն միանգամայն թէ անհրաժեշտ է Աղթամարայ համար կաթողիկոս մը դնելը, երկրին և ժողովրդեան բարւոյն և խաղաղութեան համար. հակառակ դէպքում կրնան մեծամեծ չփոթութիւնք ծագիլ, որոց հետեւանքն վնասաբեր կը լինին ազգին։ Աղթամարցոց այս նամակը մեծ ազդեցութիւն կ'ունէ Հոգևոր ժողովոյն վրայ, որ հակառակ իր 1843 տարւոյ որոշման, յուլիս 28ին (1851) գումարման մէջ արժան կը տեսնէ, որ ազգասէր և արժանաւոր եպիսկոպոս մը Աղթամարայ կաթողիկոս ընտրելը՝ ազգին խաղաղութեան համար կարեւոր է, և զերագոյն ժողովն ալ կ'ընդունի այս սրոշողութիւնը։ Այս միջոցին Վանայ առաջնորդ Գաբրիէլ եպիսկոպոսէն թղթի մը կը հանի ի Կ. Պոլիս, որով կը ծանուցանէ, թէ Աղթամարցիք կասկածելով որ իրենց այլ եւս կաթողիկոս պիտի չդրուի, 300 հոգւով Վանայ առաջնորդարան եկեր և բողոքեր են, թէ կաթողիկոս կ'ուզեն, ապա թէ ոչ կրօնափոխ կը լինին։ Ասոր վրայ ժողովը որոշում մը չըրած՝ յանդիմանական և խրատախառն թուղթ կը գրէ ժողովրդեան որ խաղաղին և թէ գաւառի մէջ գտնուած եպիսկոպոսաց, և վարդապետաց անուանց ցանկ մը դրկին ի Պատրիարքարան, որ ընդհանուր ժողովով կաւարուի կաթողիկոսի ընտրութիւնը։ Գերագոյն ժողովոյն սրոշման և գրոյն համեմատ, Աղթամարցիք կը դրկեն հետեւեալ եօթը կաթողիկոսական ընտրելեաց անուանց ցուցակը, խնդրելով որ փութով կաթողիկոսի նոր ընտրութիւն ըլլայ, և ասանձին գրով ալ կ'ուզեն կաթողիկոսացնել Վանայ առաջնորդն։

ՑՈՒՑԱԿ ԸՆՏՐԵԼԵԱՑ

1. «Գաբրիէլ եպիսկոպոս առաջնորդ Վանայ.

2. Մկրտիչ եպիսկոպոս առաջնորդ Բաղեշոյ.

3. Յարութիւն եպիսկոպոս Վանահայր Կուսաց անապատին.

4. Կարապետ եպիսկոպոս Կուսաց անապատին.

5. Մարգար եպիսկոպոս Կուսաց անապատին.

6. Պետրոս եպիսկոպոս (միաբան) Աղթամարայ.

7. Մարգար եպիսկոպոս Խիզանայ»։

Ազգային ժողովոյ 1851 թուի օգոստոս 7ին գումարման մէջ եղած որոշման համեմատ, պաշտօնական գրով կը յայտարարեն Աղթամարցոց թէ Վանայ առաջնորդն յէջմիածին հաստատուած լինելով եպիսկոպոս, Աղթամարայ կաթողիկոսութեան իրաւունք չունի. նոյնը յատուկ թղթով մը կ'իմացընեն նաեւ Գաբրիէլ եպիսկոպոսին։ Բայց Աղթամարցիք այդ պաշտօնական յայտարարութեան հակառակ, ժողով գումարելով ի Վան, իրենց կաթողիկոս կ'ընտրեն զՅ. Գաբրիէլ և ապա կը խնդրեն ժողովէն որ ըստ ընդէից և կամաց ժողովրդեան, անօրինէ խնդիրը։ Ազգային ժողովն ալ նոյն տարւոյ դեկտեմբեր 14ին նիստին մէջ՝ ընդդէմ իւր առաջին որոշողութեան, արժան կը դատէ Աղթամարայ կաթողիկոսութիւնը իբրեւ առաջնորդութիւն կցորդելով, Վանայ առաջնորդ Գաբրիէլ եպիսկոպոսի անուանը խնդրագիր տալ և կայսերական հրովարտակ առնուի իբրեւ առաջնորդ Աղթամարայ, և այս մասին գիր գրուի նաեւ յէջմիածին։ Նոյն ժամանակի Կ. Պոլսոյ Պատրիարք Յ. Յակոբ Գ. արքեպիսկոպոսը չանալով կատարել ժողովոյն որոշողութիւնը, խնդրագիր կու տայ առ Բ. դուռն Յ. Գաբրիէլ եպիսկոպոսի պաշտօնին քաղաքական հաստատութեան հրովարտակ առնելու համար, և 1852 տարւոյ յունուար 31ին այս նիստին նկատմամբ կը գրէ յէջմիածին առ հայրապետն Յ. Ներսէս Ե. Աշտարակեցի։

Բայց դեռ ազգին ընդհանուր հայրապետէն, Պատրիարքական սոյն գրոյն պատասխանն չընդունած, Կ. Պոլսոյ Հոգևոր և Գերագոյն ժողովներն միաբան 1852 թուի յունիս 5ին կ'որոշեն զանազան կանոններ Աղթամարայ կաթողիկոսի, միաբան եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից և ժո-

digitised by A.R.A.R.@

ղովրդոց համար. մի և նոյն ժամանակ յայտարար նամակ մ՚այլ կը գրուի առ Տ. Գաբրիէլ, որ Աղթամարայ վիճակին կաթողիկոսական օծումն ընդունի ի մխիթարութիւն ժողովրդոց և յանդորրութիւն ազգին։

Աղթամարայ վանուց համար նոր տահմանուած կանոնաց գէթ վերնագրերն յիշելով, հակիրճ ակնարկ մը տանք.

Համառօտ կանոնք սահմանեալք ի պէտս բարեկարգութեան մեծի տանն Աղթամարայ։

Պաշտօն և պարտաւորութիւն կաթողիկոսին։

Կը պարունակէ հինգ համառօտ կանոններ յորս կը բացատրուի թէ ինչ պարագաներու և ինչ խնդիրներու համար պարտաւոր է դիմել Կ. Պոլսոյ Հոգեւոր ժողովոյն և Պատրիարքի հաւանութիւնն առնուլ, թէ ինչպէս պէտք է սիրով և քաղցրութեամբ վարուիլ ընդ հպատակս, միաբանութեան զարգացման և յառաջադիմութեան ճգնիլ, գիտութեան տարածման՝ և վարժարանաց բացման նոյն իսկ գիւղերու մէջ մեծ հոգ ունենալ։

Պաշտօն և պարտաւորութիւն եպիսկոպոսաց, վարդապետաց և քահանայից։

Վեց կանոնաց մէջ ամփոփուած, յորս կ՚ըսուի թէ ինչպէս պէտք են հնազանդ լինել կաթողիկոսին, հաւատարիմ մնալ Աթոռոյն, առաքինի և բարի վարուք պատկառելի լինել ամենուն, հոգեշահ խրատներ և քարոզներ խօսիլ յեկեղեցիս, չցանկալ մեծութեան և պատուոյ, և այլն։

Պարտաւորութիւն ժողովրդոց առնասարակ։

Հինգ բարոյական և կրթական կանոններ։

Յամի 1852 յունիս 6ին Հոգեւոր և Գեղրագոյն ժողովները կ՚որոշին և մուտք կը գրեն Աղթամարայ միաբանութեան և թեմականաց, որ ամենայն կերպով հպատակելով նորընծաւր կաթողիկոսին, ճշգրտեմբ պահեն իրենց որոշած կանոններն, ի պայծառութիւն և յառաջադիմութիւն ազգին։

Կ. Պոլսոյ Պատրիարքը վերոյիշեալ կանոնները և Տ. Գաբրիէլ եպիսկոպոսի կաթողիկոսական օծման հրամանը ղրկելէն վերջ՝ ի պատասխանի իւր գրոյն, կ՚ընդունի Տ. Ներսէս Ե հայրապետի կոնդակն, գրուած ի Թիֆլիս յունիս 16ին։ Այդ կոնդակն մի խիստ յանկիմանական ազդարարութիւն էր առ ազգային գործիչս Կ. Պոլսոյ. որով կը յիշուէին և վեր ի վայր կը տապալին Հոգեւոր և Գեղագոյն ժողովոց որոշումներնք։ Տ. Գաբրիէլ եպիսկոպոսն ալ առանց կաթողիկոսական օծման, պարզ ընտրեալ կաթողիկոս կամ արքեպիսկոպոս անուամբ մինչեւ 1856 տարւոյ սեպտեմբեր ամիսը, փոխանակաբար Աղթամար և Վան տարտամ ղրկից մէջ մնալէ վերջ, ճարահատեալ կը սկսի վերստին միայն Վանայ առաջնորդական պաշտօնը առաջ տանել։ Իսկ Հոգեւոր և Գեղագոյն ժողովներն, նոյն ժամանակ Աղթամարայ և անոր վիճակաց առաջնորդ կը կարդեն Եղեսացի Տ. Յակոբ եպիսկոպոսը. որոյ պաշտօնավարութիւնն խիստ կարճ տեւելով՝ Աղթամարը կը մնայ ոչ միայն առանց կաթողիկոսի այլ և անառաջնորդ։ Այն ժամանակ Սուրբ Խաչի միաբաններու խորհրդով վանքի կառավարութիւնը դարձեալ կ՚անցնի մեր վերը յիշած Խաչատուր՝ վարդապետի ձեռքը։ Այնուհետեւ մինչեւ Տ. Ներսէս Ե Աշտարակեցոյ մահը, ոչ Աղթամարցիք խնդիր յարուցած են իրենց կաթողիկոսութեան համար և ոչ ալ Կ. Պոլսոյ ազգային կրկին ժողովներն սրբոշում մը բրած են այդ նկատմամբ։

Հ. Ս. ԼԵՓԻՍԿԵԱՆ

Շարայարելի

---

1. Այս այն Խաչատուրն է՝ որ ինչպէս վերջը պիտի տեսնենք Տ. Պետրոս Պիլպիւլ կաթողիկոսը գահընկէց ընելով նստաւ Աղթամարայ գահը 1863էն 1895, որոյ կենսագրութիւնը բաւական ճոխ և փայլուն կերպով գրած է Յովհ. վ. Բաղունի, որ լոյս տեսաւ Արարատ ընտիր գեղարուեստական հանդիսի 1897 տարւոյ Բ գրքի 51–61 էջից մէջ, հանդերձ Աղթամարայ վանքի, հանդ. Խաչատուր կաթողիկոսի և յԱղթամար կատարուած Խաչվերացի հանդիսի պատկերներով։